ԳՈՀԱՐ ԳԱԼՍՏՅԱՆ

ԳՈՒՆԴՈՒՉԻԿՆ ՈՒ ՀԱՅԵԼԻՆ

Մանկական բանաստեղծություններ
հեղինակի նկարազարդումներով

Երևան
Վան Արյան
2022

ԳՈՒՆԴՈՒՉԻԿԸ ԽԱՂԸՆԿԵՐ

Գունդուչիկը երևի
Նոր էր տեսնում հայելին.
Եկավ, կանգնեց դեմուդեմ,
Ու չգիտեր ի՞նչ աներ…

Ձեռքի գնդակը փափուկ
Թափով նետեց հայելուն,
Հայելին էլ, դե՝ գիտեք,
Ողջը կրկնեց մեկ առ մեկ:

Գունդուչիկը, այս անգամ,
Գնդակն առավ ու ժպտաց.
Հիմա ուներ խաղընկեր՝
Ժպտերես ու գանգրահեր:

ԳՈՒՆԴՈՒՉԻԿԸ ՓՐԿԱՐԱՐ

Մի օր բակից, աննկատ,
Գունդուչիկը դուրս փախավ:
Կողքի փոքրիկ պուրակում
Կամրջակ կար, վրան՝ շուն:

Ուրիշ էլ ո՛չ ոք չկար՝
Գունդուչիկը երբ հասավ.
Շունն արդեն ջուրն էր ընկել,
Բայց Գունդուչիկը փրկեց:

Գրկեց փոքրիկ կենդանուն,
Նայեց, ջրում տեսնի՝ ո՞ւմ -
Խաղընկերն իր մշտական,
Հետն էլ շունն՝ իր շան նման:



Գունդուչիկը, անկասկած,
Ինչ-որ մի բան հասկացավ,
Ժպտաց ջրի հայելուն,
Ծանը գրկած տարավ տուն:

ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՅԵԼԻ

Մեծ էր այգին մանկական,-
Կարուսելներ, ճոճանակ,
Խաղասրահ մեջտեղում.
Գունդուչիկը կորավ՝ ո՞ւր:

Մի դռնակ կար՝ ճըռ՛ռ բացվեց,
Գունդուչիկը մտավ ներս,
Դեսուդեն էր դեգերում՝
Տեսավ խորքում մի մարդու:

Մարդը եկավ ընդառաջ,
Կանգնեց դիմացը անշարժ,

Ինքն էլ կանգնեց իր տեղում,
Աչքերն էր դեռ տրորում...

Սա ի՞նչ էր՝ մեծ հայելի՞,
Խոշորացնող ամեն ինչ,
Դիմացը մեծ մա՞րդ էր, թե՞
Խոշորացած Գունդուչիկ:

Երբ որ նայեց աջունձախ,
Է՛լ ավելի զարմացավ.
Ամեն կողմում հայելի՝
Ծիծաղաշարժ, խնդալի:

Իր պատկերը մի կողմում
Երկա՛ր՝ դարձել էր ընձուղտ,
Ուրիշ տեղում՝ գո՛ւնդ-գնդակ,
Գունդուչիկն էր, բայց՝ տափակ:

Այստեղ դարձել էր թզուկ
Կամ մի փոքրիկ արջամուկ,
Ականջները՝ տափօղակ,
Խնդում էր, ոնց որ դողար...

Մի քանի քայլ, և էլի՝
Ծիծաղում է լիուլի.-
Իր ոտքերն են՝ կտրված,
Հայտնվել են վզից ցած:

Կչկչում է, խոսք չկա,
Սրան նայեք դուք հապա,-
Գլուխը՝ լայն ուսերից,
Բերանը բաց, քիթը՝ ցից:

Չէր դիմանում, դուրս գնաց,
Բայց ծիծաղում էր քահ-քահ...
Ի՜նչ ուրախ էր, երբ սրտանց
Խնդում էր ինքն իր վրա...

ՇՆԱՐԱՄԻՏ ՀԱՅԵԼԻ

Ոսկեգանգուր մազերով,
Հեծանիվով մանկական,
Ո՞վ է տեսել մի զինվոր՝
Ժպտերես ու մարտական:



Գունդուչիկն է մեր արի,
Շոր է հագել զինվորի՝
Պաշտպանում է նորելուկ
Միծեռնակի ձագերին:

Ու երբ կատուն խորամանկ
Մոտ է գալիս տանիքին,
Վեր է թեքում նա իսկույն
Հեծանիվի հայելին:

Քար չի՛ գցում նա կատվին,
Այլ միայն ցոլքն արևի,
Որ, երեսը շրջելով՝
Կատուն փախչի կտուրից:

ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Գունդուչիկը անվարան
Մի օր մտավ թանգարան,
Տեսավ խմբով մանուկներ,
Ինքն էլ քայլեց նրանց հետ...

Քիչ անց մտավ մի սրահ,
Ուր ի՛նչ ասես որ չկար՝
Էլ բրածո ոսկորներ,
Հին-հին զենքեր ու փողեր...

Գույն-գույն զարդեր աննման,
Կավե կժեր ու աման,
Քարտեզներ ու քարե պատ՝
Փորագրված հատ առ հատ.

Պատմությունը աշխարհի՝
Տեսավ որպես հայելի,
Ուզեց արագ մեծանալ՝
Գրել-կարդալ իմանալ:

Ճրջեց, տեսավ ամեն ինչ,
Ու իր տեսած ամենից
Հիշողության հայելին
Վերցրեց՝ պահեց ավելին.-

Գրանցեց տեղն ամենի՝
Մի թանգարան գիտելիք,
Որ, երբ մի քիչ մեծանա,
Գա՝ ամբողջին տեր դառնա:

ՍՆԿՈՎ ԿԱՐԿԱՆԴԱԿ

Ծառի բնին շատ մոտիկ՝
Սնկի գլխարկ ու տոտիկ,
Էս ի՞նչ սիրուն են աճել,
Տե՛ս, մի սունկ էլ, շա՜տ սնկեր…

Պապ ու թոռնիկ, տատ ու ծոռ՝
Մեծ ու փոքրիկ սնկերով,
Հավաքվել են ծառի տակ.
Ոնց որ՝ սնկի գումարտակ…

Գունդուչիկն էլ, պապի հետ,
Եկել է սունկ հավաքի,
Տատի խմորը պատրաստ՝
Դեռ սունկ է պետք միջուկին:

- Դու, ի՛մ տղա, չշտապես,-
Հորդորում է պապն արդեն,-
Սնկի գլխարկը պոկել,
Կամ տոտիկը վնասել…

Երեկ անձրև էր, հեղեղ,
Հողի տակ թաց է եղել,
Դուրս են եկել գիշերով
Նաև սնկեր թունավոր:

- Ուրեմն, զգո՛ւյշ, թող՝ տեսնեմ,
Ճանճասպանին չդիպչես,
Աղվեսասունկ կա՝ մի տես,
Դեղին, ոնց որ ձվածեղ:

- Բա Շամպինիոնը, պապի՛կ,
Էս թփի տակ լիքն է խիտ...
Կուզե՞ս սնկով կարկանդակ՝
Պոկիր տոտիկ ու գդակ...

ԳԵՏԱՓԻՆ

Ամռան տապին, գետափին,
Գունդուչիկը լողացած՝
Քար էր նետում պարապից,
Երբ ճիչերում խլացած
Ձայնը լսեց ընկերոջ.

- Օգնե՛ք,- կանչում էր Սուրոն:

Ափին աշխույժ էր տիրում,
Անգամ մեծեր կային շատ,
Բայց Գունդուչիկը հերոս
Իսկույն նետվեց ընդառաջ...

Ոտքը խփել էր քարի,
Արյունոտ էր՝ երբ եկան,
Բայց Սուրոյի հետ հետո
Ուրախացան շատ երկար...

Ասում էր՝ ո՞նց լսեցիր
Աղմուկի մեջ ձայնը իմ...
Բայց Գունդուչիկն ուսերով
Միայն թոթվում էր՝ «եսիմ»...

Եվ մայրիկն էր Սուրոյի
Վազքով հասել գետի ափ,
Գիրկն էր առել երկուսին
Ու արտասվում էր անձայն:

- Լաց մի՛ եղեք, չի՛ ցավում,
Արյունն էլ ոնց որ անցավ.-
Սա՛ էր խոսքը հերոսի,
Որ օգնեց ու մոռացավ:

ԳՈՒՆԴՈՒՉԻԿԸ

ՄԱՐՁԻՉ



Լացը՝ լցված աչքերում,
Գլուխը կախ՝ թռչնի պես,
Սաթեն նստել էր բակում՝
Մենակ, տխո՛ւր էր այնպես:

Գունդուչիկը երբ տեսավ
Նրան այդպես լացելիս,
Մոտ վազեց ու զարմացած
Հարցրեց՝ ինչո՞ւ ես լալիս:

Ասաց՝ հրել է Սեթոն,
Ձեռքից քաշել է կոպիտ,
Խաղալիքն իր սիրելի՝
Խլել-տարել է մոտից:

- Վա՜յ, Սաթե՛ջան, բայց Սեթոն
Քո եղբայրն է սիրելի,
Քեզնից փոքր է՝ խաղա թող,
Դու էլ դարձիր ֆուտբոլիստ:

Ձեռքը տվեց Սաթեի,
Ոտքի գնդակը կաշվե,
Ասաց.- Կանգնեմ դարպասին,
Դու խփիր, ես՝ կհաշվեմ...

Սաթեն նախ լացը կտրեց,
Ծիծաղեց ու վեր կացավ,
- Ապրես,- ասաց,- Գունդուչի՛կ,
Բայց ես ֆուտբոլ ո՞նց խաղամ:

ԳՈՒՆԴՈՒՉԻԿԸ

ԲՆԱԳԵՏ

Վանդակ ուներ թռչունի,
Կողքին՝ մի մեծ ակվարիում,
Հովակը, լա՛վ բնասեր,
Թռչուն ու ձուկ էր պահում:

Գունդուչիկը՝ նրան հյուր,
Հմայվել էր ձկնիկով,
Հարցրել էր Հովակին,
Կեր էր տալիս իր ձեռքով:



Իսկ թութակը ջանասեր՝
Բառ էր փնտրում շեղելու,
Վանդակի դուռը բացել՝
Թը՛ռ, եկել էր շփվելու:

- Ձուկի՛կ,- հանկարծ բղավեց,
Թառեց ուսին Հովակի,
Գունդուչիկը շփոթված
Ձեռքը մեկնեց թութակին:

- Ձուկը չունի ո՛չ լեզու,
Ո՛չ էլ թևեր, որ գա մոտ.
Տե՛ս, Գունդուչի՛կ, էս էլ մեր
Ձո՛ւռ թութակը մարդամոտ...

ԲՌՆՈՑԻՆԵՐ ԲԱԶՄՈՑԻՆ

Վիզը տաք-տաք փաթաթած,
Թուշիկները՝ կաս-կարմիր,
Հիվանդ պառկել էր ջերմով
Գունդուչիկը բազմոցին…

Մի քիչ տխուր էր կարծես,
Եվ մայրիկն էր անհանգիստ,
Բայց Գունդուչիկը մտքով
Բակում ելել էր վազքի…

Այնքան խաղաց բռնոցի,
Մինչև քրտնեց՝ ջուր դարձավ…
Իսկ երբ շորերը փոխեց,
Ջերմը իջավ՝ լավացավ:





ԸՆԿԵՐՈՎԻ ԽԱՂ

- Երեխաները բակից
Քեզ են կանչում, Գունդուչի՛կ...
- Հիմա գալիս եմ, գալիս.-
Ձայն է տալիս նա ներսից:

Եվ վազում է տնից դուրս՝
Ուրախացած, եռքով լի,
Ընկերներն են հավաքվում
Գունդուչիկի սիրելի...

Հարցնում են՝ ո՞ւր էիր.
- Հիվանդ էի՝ լավացա:
- Արի խաղանք միասին
Բռնոցի կամ հավալա...

Խաղ են անում գնդակով,
Հասնում՝ փախչում մեկմեկից,
Ծավալվում է իսկական
Վազքն ու աշխույժ բռնոցին...

ԼԱՎ ԸՆԿԵՐՆԵՐ

Աղջիկների հետ բակում՝
Բաբկենի կամ Սոսի պես,
Գունդուչիկը չէր կարող
Կոպիտ վարվել կամ խոսել:

Չէր քաշքշի հյուսքերից
Երկարամազ Մանեի,
Չէր թողնի, որ նեղացնեն
Անիին կամ Նանեին:

Խաղի մեջ ինքը անգամ
Նրանց կարող էր զիջել,
Իսկ քույրիկի լացն անհամ
Գիտեր իսկույն ընդմիջել,-

Ժպտում, կանչում էր՝ Արփի՛,
Գիրկն էր առնում սայլակից,
Ու կչկչում էր Արփին,
Հեծանիվի ընթացքից…

Գունդուչիկը իր նման
Ուներ բակում ընկերներ,
Որ գիտեին և՛ խաղալ,
Եվ փոքրերին պաշտպանել:

ՁՄՌԱՆ ՀՅՈՒՐԸ

Ձյուն էր եկել գիշերով՝
Ծերմակել էր դուռ ու բակ,
Գունդուչիկը ափերով
Ձյունից սարքել էր գնդակ:

Ուրախացել էր անչափ,
Որ այդքան ձյուն է եկել,
Ընկերների հետ արագ
Երկրորդ գնդակն էր սարքել:

Իսկ երբ գնդակը երրորդ
Թավալել էր բակով մեկ՝
Մի մեծ թմբուկ էր ստացվել,
Որը դեռ պետք էր կոկել...

Սուրոն գազար էր բերել,
Վաչիկը՝ դույլ ու ածուխ,
Գունդուչիկը ձեռքերով
Հղկում էր գունդը աշխույժ:

Ու երբ պատրաստ երեք գունդ
Մեծից փոքր կրեցին,
Տարան, բակի եղևնու
Արմատի մոտ դրեցին,

Հանկարծ մեկը փռշտաց
Սուրոյենց սուր գազարով,
Աչքի ծայրով էլ ժպտաց
Ածուխների սև փայլով.

Ասաց՝ թե կա՛ Ձնեմարդ,
Կգա նաև Նոր-Տարի,
Դույլը գլխին առավ թարս՝
Գլխարկի պես Վաչոյի:

Հիմա երեք ընկերով
Ոնց են խնդում զարմացած.
Մյ քեզ հրաշք՝ իսկական
Ասող-խոսող Ձնեմա՛րդ...

ՄՏՔԻ ՀԱՅԵԼԻՆ

Պատկերազարդ, գունագեղ
Իր գրքույկի էջերին,
Մատն էր շարժում ձախից աջ
Գունդուչիկը տողերին:

Կարդում էր վարժ, անսայթաք,
Չէր շփոթում ո՛չ մի տեղ,
Կարդում էր, բայց, ո՞վ զարմանք՝
Դեռ տառերը չգիտեր...

Անգիր արել լսելով՝
Մտքում պահել էր քիչ-քիչ,
Շուտով՝ գնա երբ դպրոց,
Կսովորի ամեն ինչ:

ԳՈՒՆԴՈՒՉԻԿԸ՝

ԵՐԱԶՈՒՄ

Քնելուց առաջ
Միշտ բա՛րի գիշեր,
Բարի երա՛զ է
Մաղթում ամենքին,
Հեքիաթասացը՝
Գլխարկով գունեղ,
Ձայնով թավիշե,
Ժպիտը դեմքին:

Եվ հաճախ, քնած
Մանուկներն անհոգ
Տեսնում են իրար
Նաև երազում,
Հեքիաթների մեջ,
Թե խաղին տրված՝
Կանչում են իրար,
Ցատկում, վազվզում:

Մեր Գունդուչիկն էլ՝
Նոր աչքը փակած,
Իր ընկերներին
Պատմում է արդեն.

- Գիտե՞ք, մեր մասին
Մի գիրք կա գրված,
Կկարդանք վաղը՝
Հենց քնից զարթնենք:

ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՐԻԿԻ ՄԵՔԵՆԱՅԻՑ

- Տղա՛ս, հայելին ի՞նչ է քո խելքով,

- Գործի՞ք է, հայրի՛կ:

- Գործիք՝ շա՛տ խելոք...
Որ ճանաչել է օգնում ինքդ քեզ,
Որ ցույց է տալիս ճամփա, երթևեկ...

- Ղեկին, չէ՞, հայր՛իկ, ավտո վարելիս:

- Ճի՛շտ է, որ տեսնես՝ ինչ կա ետևից:

- Հայրի՛կ, իսկ ո՞վ է հորինել, ասա՛:

- Մի խելոք վարպետ, որ հղկեց մետաղ:

- Դա ե՞րբ պատահեց:

- Անտիկ աշխարհում...

- Իսկ հետո արդեն թրծված ապակուն
Արծաթի շերտով կամ շերտով ոսկու
Կատարյալ դարձավ տեսքը հայելու:

- Թե այսօր ի՞նչ է հայելին՝ ասե՞մ.
Հղկված ապակու ներկված մակերես:

- Ապրես, բայց ներկ չէ, այլ նյութ է հատուկ:

- Որ մեր ամեն քայլ կրկնո՞ւմ է ծածուկ...
- Հայրի՛կ, հայելում դու ի՞նչ ես տեսել,
Երբ իմ տարիքի տղա ես եղել...

- Ես քե՛զ եմ տեսել, իմ խելոք տղա,
Որ քո աչքերում տեսնեմ ինձ հիմա:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Գունդուչիկը խաղընկեր	3
2.	Գունդուչիկը փրկարար	4
3.	Ուրախության հայելի	5
4.	Շնարամիտ հայելի	8
5.	Թանգարանում	10
6.	Մնկով կարկանդակ	12
7.	Գեղափին	14
8.	Գունդուչիկը մարգիչ	16
9.	Գունդուչիկը բնագետ	18
10.	Բռնոցիներ բազմոցին	20
11.	Ընկերովի խաղ	21
12.	Լավ ընկերներ	22
13.	Ձմռան հյուրը	24
14.	Մտքի հայելին	26
15.	Գունդուչիկը՝ երազում	27
16.	Շեփգրություն հայրիկի մեքենայից	29

ԳՈՀԱՐ ԳԱԼՍՏՅԱՆ

ԳՈՒՆԴՈՒՉԻԿՆ ՈՒ ՀԱՅԵԼԻՆ

Մանկական բանաստեղծություններ

Հրատարակիչ խմբագիր՝
Վան Արյան

Մատիտանկարները՝
Գոհար Գալստյանի

Էջադրող՝
Նարինե Հովհաննիսյան

Չափսը՝ 60x84, 1/16:
Ծավալը՝ 2 տպ. մամուլ:
Թուղթը՝ կավճապատ, տպագրությունը՝ օֆսեթ:

Տպագրվել է «Վան Արյան» հրատարակչատանը
ՀՀ, Երևան, Բաղրամյան փ. 3
+(374) 10 54 33 17
vanaryan1996@yahoo.com